ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7684

07 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐՈՒՇԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԱՓԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷՍՔԻԶԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՂԱՆՆԵՐ, ԱԹՈՌՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ՝ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՒՅՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, քննության առնելով թիվ 07/25 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ.Մաշտոց փողոցի 4 շենքի հարակից տարածքում Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության կամ հաստատված չափագրության սխեմայից դուրս կամ հաստատված էսքիզային առաջարկի խախտմամբ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայություն կազմակերպելու կամ դրա նպատակով սեղաններ, աթոռներ և այլ պարագաներ տեղադրելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն իրավախախտումը կրկին կատարելու վերաբերյալ, պարզեց, որ

Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Արմավիր, Ամբերդ, Կոլտնտեսականների փողոց, թիվ 6 տուն, Պետ.գրանցման համար՝ 99.1235334 / 2022-05-03, ՀՎՀՀ՝ 49760935), Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի 4 շենքի հարակից տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված պահանջները՝ առանց համապատասխան թույլտվության կամ հաստատված չափագրության սխեմայից դուրս կամ հաստատված էսքիզային առաջարկի խախտմամբ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայություն կազմակերպել կամ դրա նպատակով սեղաններ, աթոռներ և այլ պարագաներ տեղադրելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 17.06.2025 թվականին կազմված թիվ ՆԷ 1 արձանագրության հիման վրա 2025 թվականի հունիսի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 13-րդ իրավախախտման հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը, հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 17.06.2025 թվականին կազմված թիվ ՆԷ 1 արձանագրությունը:

2. Հանձնաժողովի թիվ 07 /25 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ 30.06.2025թ. թիվ 1 և 07.07.2025թ. թիվ 2 արձանագրությունները:

3. Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

4. Վաղարշապատ համայնքի ղեկավարի՝ թիվ 74/24 վարչական գործով 25.10.2024 թվականի թիվ 1657Ա որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ.Մաշտոց փողոցի 4 շենքի հարակից տարածքում, իրականացրել է առանց թույլտվության համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպում կամ դրա նպատակով սեղանների, աթոռների և այլ պարագաների տեղադրում, ինչի կապակցությամբ 2024 թվականի սեպտեմբերի 26-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցվել էր վարչական վարույթ, որը ավարտվել էր Վաղարշապատ համայնքի ղեկավարի վարույթում քննված թիվ 74/24 վարչական գործով 25.10.2024թ. կայացված թիվ 1657Ա որոշմամբ, ըստ որի Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը ենթարկվել է վարչական պատասխանատվության և վարչական իրավախախտման համար նշանակվել է տույժ:

Չնայած այն հանգամանքին, որ Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ.Մաշտոց փողոցի 4 շենքի հարակից տարածքում, առանց թույլտվության համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպում կամ դրա նպատակով սեղանների, աթոռների և այլ պարագաների տեղադրելու համար ենթարկվել է վարչական տույժի, վերջինս շարունակել է նույն իրավախախտման կատարումը, այսինքն Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերն առանց թույլտվության համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպում կամ դրա նպատակով սեղանների, աթոռների և այլ պարագաների տեղադրում իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, որի վերաբերյալ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 17.06.2025 թվականին կազմված թիվ ՆԷ 1արձանագրությունը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունիսի 30-ին հրավիրվել է լսում, որը հետաձգվել է Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատիրոջ կողմից ծանուցումը չստանալու պատճառով:

Այլ հերթի նշանակված լսումը հրավիրվել է և անցկացվեց 2025 թվականի հուլիսի 7-ին, լսման վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատիրոջը, որը վերջինս ստացել է 01.07.2025թ.-ին /հիմք՝ փոստային ծանուցում ALO128362292AM/, ծանուցումը նաև հրապարակվել ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում, այսինքն Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցվել է վարչական լսման ժամանակի և վայրի վերաբերյալ:

Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով 2025 թվականի հուլիսի 7-ին համայնքապետարանում հրավիրված վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը</u>.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության կամ հաստատված չափագրության սխեմայից դուրս կամ հաստատված էսքիզային առաջարկի խախտմամբ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայություն կազմակերպելը կամ դրա նպատակով սեղաններ, աթոռներ և այլ պարագաներ տեղադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար:

Այսինքն՝ Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ.Մաշտոց փողոցի 4 շենքի հարակից տարածքում առանց համապատասխան թույլտվության համայնքի վարչական տարածքում ամառային սեզոնին իրականացրել է հանրային սննդի ծառայության կազմակերպում, դրա նպատակով սեղանների, աթոռների և այլ պարագաների տեղադրում վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 32-րդ հոդվածներով և 169.16-րդ հոդվածի 13-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և 57-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համլետ Սարգսյան Անդրուշի անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ Վաղարշապատ համայնքի տարածքում առանց համապատասխան թույլտվության կամ հաստատված չափագրության սխեմայից դուրս կամ հաստատված էսքիզային առաջարկի խախտմամբ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայություն կազմակերպելու կամ դրա նպատակով սեղաններ, աթոռներ և այլ պարագաներ տեղադրելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն արարքը կրկին կատարելու համար՝ **200 000 /երկու հարյուր հազար/** ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի՝մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1696Ա

07 նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 35 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 26.08.2020թ. թիվ 833Ա որոշման պահանջներով, առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Լիլիթ Սարգսի Հմայակյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 35 հասցեում գտնվող՝ ընդհանուր 303.8քմ /303.8քմ արտաքին և 267.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը, պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0335հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Լիլիթ Սարգսի Հմայակյանը տվել է իր գրավոր համաձայնությունը գնելու այն՝ ըստ ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների 303.8քմ /303.8քմ արտաքին և 267.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը, պարիսպը 1 794 547 /մեկ միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ և 0.0335հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 1 488 003 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար երեք/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լիլիթ Սարգսի Հմայակյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 35 հասցեում գտնվող՝ ընդհանուր 303.8քմ /303.8քմ արտաքին և 267.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը, պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0335հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելիկառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Լիլիթ Սարգսի Հմայակյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 770ա

08 հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Հ. ԴԱՆՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 58/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ 12.5ՔՄ և 48.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ասատուր Արթուրի Կիրակոսյանի լիազորված անձ Արմեն Ռազմիկի Պետրոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Ասատուր Արթուրի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 10.09.2024թ. տրված թիվ 28042025-04-0031 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Դանղյան փողոցի թիվ 58/5 հասցեում գտնվող անշարժ գույքի շինությունների բնութագիր էջում նշված 12.5քմ և 48.3քմ մակերեսով շինությունների նպատակային նշանակությունը՝ բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը բնակելի տան փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08.05.2025թ. թիվ Կ-08052025-04-0158 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Դանղյան փողոցի թիվ 58/5 հասցեում գտնվող անշարժ գույքի շինությունների բնութագիր էջում նշված 12.5քմ և 48.3քմ մակերեսով շինությունների նպատակային նշանակությունը փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի տան, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7714

08 հոկտեմբեր 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 19.06.2025Թ. ԹԻՎ 719Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ և 37-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 01.07.2025թ. թիվ Կ-01072025-04-0115 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 19.06.2025թ. թիվ 7193Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական մասում նշված «30.05.2025թ.» բառերի փոխարեն կարդալ «07.07.2025թ.» բառերը, իսկ եզրափակիչ մասում նշված «0.016հա» բառերի փոխարեն կարդալ «0.0159հա» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 773Ա

08 հուլիսի 2025թ.   ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՇՈՂԱԿԱԹ ԱՂՎԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Շողակաթ Աղվանի Եղիազարյանի լիազորված անձ Դանիել Ջավենի Գևորգյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 24.12.2024թ. հաստատված 10343, 10344 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 02.06.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ֆ. Վերֆելի /նախկին Շոլոխովի/ փողոցի թիվ 31 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Շողակաթ Աղվանի Եղիազարյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.055 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0106հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին Ֆ. Վերֆելի /նախկին Շոլոխովի/ փողոցի թիվ 31 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0106 հա մակերեսով հողամասը համարել Շողակաթ Աղվանի Եղիազարյանի / ծնված՝ 20.11.1979թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ   Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 773Ա

08 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 23-րդ փողոցի թիվ 27 տան բնակիչ Գեղամ Հովսեփի Կիրակոսյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11072024-04-0096 տրված՝ 11.07.2024թ., «Ջիվան Արսենի Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 18.06.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022HL2VDCF, 04022DCABRVP/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 107 անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց թիվ 107 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց թիվ 107/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 774-Ա

08 հուլիսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 58/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Գետափնյա փողոցի թիվ 4 տան բնակիչ Գոհար Մնացականի Մարտիրոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 06.12.2021թ. տրված թիվ 06122021-04-0067 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 58/1 հասցեում գտնվող 0.0372հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատումից հասարակական կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 58/1 հասցեում գտնվող 0.0372հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 774Ա

09 նոյեմբեր 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 27.06.2025Թ. ԹԻՎ 748Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 27.06.2025թ. թիվ 748Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

վերնագրում, հիմնական և եզրափակիչ մասերում նշված «հասցեում գտնվող» բառերից հետո լրացնել «սեփականության իրավունքի վկայականի շինությունների բնութագիր էջում նշված թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, և 8 » բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 764Ա

09 հոկտեմբեր 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ. Նարեկացու փողոցի թիվ 8 տան բնակիչ Սամվել Գևորգի Երանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 16.07.2007թ. տրված թիվ 2412668 սեփականության իրավունքի վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Հռիփսիմեի փողոցի թիվ 9/3 հասցեում գտնվող 0.0138հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից խառը կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված զույգի նկատմամ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.07.2025թ. թիվ Կ-04072025-04-0109 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Հռիփսիմեի փողոցի թիվ 9/3 հասցեում գտնվող 0.0138հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել խառը կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7774

09 հոլիսի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Մելանյա Արտավազդի Մարտիրոսյանի լիազորված անձ Անդրանիկ Աղվանի Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 25.06.2025թ. կնքված թիվ 3344 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022F7XZRVU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 10-րդ փողոց թիվ 14 կիսակառույց:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 778Կ

09 հուլիսի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Գեղամ Մարտիկի Չափարյանի լիազորված անձ Լուսինե Ալբերտի Շախբազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10022023-04-0052 տրված՝ 07.11.2002թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022XNQG8DP/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Մ. Մաշտոցի փողոց, թիվ 94/3 անասնաշենք:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7794

09 հոկտեմբեր 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Այվազովսկու փողոցի թիվ 4/2 տան բնակիչ Հակոբ Գրիգորիի Թոսունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի Հ.Այվազովսկու փողոցի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 19062025-04-0009 տրված՝ 19.06.2025թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011RWYFV73/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ. Այվազովսկու փողոց, թիվ 4 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 780Ա

09 հունիսի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի թիվ 20ա տան բնակիչ Աշոտ Բաբկենի Սիմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի թիվ 18ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 709194 տրված 25.10.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011TF97XRH/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի փողոց թիվ 18/4 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78/Ա

09 հոկտեմբեր 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Աշոտ և Ալբերտ Արմենակի Մկրտչյանների լիազորված անձ Դանիել Զավենի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ի. Միչուրինի փողոցի թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 02.08.1989թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 14.01.2025թ. հաստատված թիվ 293 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011NBHL83Z/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ի. Միչուրինի փողոց, թիվ 46/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ